«Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան»

ՊՈԱԿ

Մասնագիտությունը

«Վարսավիրական արվեստ և զարդարային դիմահարդարում»

Մոդուլի անվանումը՝

«Կանանց մազերի կտրում»

Արդյունք1.Մազերը նախապատրաստել կտրման

Թեմա 1.1Աշխատանքի նախապատրաստում

Վարսավիրության ոլորտում կտրվածքի իրականացումն ամենադժվար, կարևոր և մի քանի փուլ պարունակող բարդ գործընթաց է: Կտրվածքի կատարման որակից է կախված մոդելավորման հաջողությունը, այն է՝ ապագա սանրվածքի տեսքը:
Կտրվածքի նախապատրաստական փուլում հարկավոր է ստուգել գործիքների հիգիենիկ վիճակը, կրել աշխատանքային համապատասխան հագուստ, ձեռքերն օճառով լվանալ և ապա անցնել հաճախորդին սպասարկելու: Նախ անհրաժեշտ է սանրել նրա մազերը՝ ստուգելով մազերի և գլխամաշկի վիճակը: Եթե վարսահարդարը հայտնաբերում է, որ հաճախո րդն ունի որևէ մաշկային հիվանդություն, ապա նա կարող է հրաժարվել տվյալ հաճախորդին սպասարկելուց:
Նախքան բուն աշխատանքին անցնելը՝ վարսահարդարը պետք է ու շադիր լսի հաճախորդին, որպեսզի իր մասնագիտական խորհուրդներով օգնի նրան ճիշտ կողմնորոշվելու կտրվածք ընտրելու հարցում:
Հաճախորդի տեսքը վարսահարդարումից հետո մեծապես կախված է կտրվածքի ճիշտ ընտրությունից և դրա արհեստավարժ կատարումից: Հաջողված է համարվում այն կտրվածքը, որը հետագայում քիչ խնամք է պահանջում:
Կախված կտրվող մազի երկարությունից և տեսակից՝ ընտրում են օգ-տագործվող համապատասխան գործիքներն ու կտրելու տեխնիկան:
Այսօր կտրվածքները բազմազան են: Ըստ կտրման տարբեր տեխնիկա- ների՝ դրանք կարող լինել և՛ կարճ, և՛ ուղիղ, և՛ շերտավոր:
Սրանցից ցանկացածը կարող է լինել համաչափ /սիմետրիկ/ կամ ան-համաչափ /ասիմետրիկ: Համաչափ է համարվում այն կտրվածքը, որի և՛ աջ, և՛ ձախ հատվածներն ունեն հավասար երկարություն ու նույն կառուց-վածքը և հակառակը՝ անհամաչափ են, երբ համապատասխանությունը բացակայում է:
Կտրվածք իրականացնելիս սանրը և մկրատը պահում են աջ ձեռքում: Մկրատի մեկ օղակը հագցնում են բթին, մյուսը՝ մատնեմատին և մկրատը բացում միայն կտրելու պահին: Սանրելիս այն հանում են բթից և պոչը թաքցնում ափի մեջ՝ սանրը բռնելով բթով և ցուցամատով: Կտրվող մա-զափունջը պահում են ձախ ձեռքով՝ կտրելու պահին սանրը փոխանցելով ձախ ձեռք:
Կարճ մազերը կտրում են գլխի հետնամասից կամ գագաթից /որոշ դեպ-

քերում հնարավոր է նաև կտրումս սկսել նաև կողմային հատվածներից/:
Հետո անցում է կատարվում կողմային հատվածներին: Հետնամասը և կո-ղմային հատվածները համապատասխանեցնելուց հետո սկսում են կտրել գագաթային հատվածի մազերը: Գագաթից սկսվող կտրվածքների ժա-մանակ մազաբաժանում չի կատարվում: Դասական շերտերով կտրվածքը սկսում են գագաթի հատվածից. վերցնում են 1-ին շերտը և կտրում, նկատի

ունենալով, որ հաջորդող շերտերը լինելու են ավելի երկար: 1-ին կտրված շերտը լինում է ամենակարճը և մյուս շերտերի համար ծառայում է որպես չափ: Գլխի բոլոր մազերը բարակ շերտերով աստիճանաբար բարձրացնում են 1-ին կտրված շերտի ուղղությամբ և նույն երկարությամբ կտրում: Ճակատային մազափունջը կարող է լինել հաջորդ շերտերի շարունակությունը կամ առանձնանալ իր չափով:

Շատ կարճ կտրվածքների ժամանակ, երբ կտրվող մազափնջի երկարությունը բավարար չէ այն ցուցամատի և միջնամատի օգնությամբ բռնելու համար, մկրատը և սանրը աշխատեցնում են միաժամանակ: Սանրը բռնում են ձախ ձեռքով, իսկ մկրատը՝ աջ: Սանրի ատամները դեպի վեր՝ սանրում են ներքևից վերև և միևնույն ժամանակ կտրում:

Ուղիղ կտրվածքներն իրականացվում են շերտը շերտի հետ չափելով: Շերտերը վերցնում են շատ բարակ, որպեսզի նախորդ շերտը թափանցի և կտրվածքը հավասար լինի: Կտրվող մազի անկյունը 0° է:

Շերտավոր կտրվածքները կարելի է սկսել թե՛ վերևից, թե՛ ներքևից: Որքան կտրման անկյունը մեծ է, այնքան շերտերը կարճ են, և որքան անկյունը փոքր է, այնքան շերտերը քիչ են: Եթե ամբողջ կտրվածքն իրականացվում է 90° անկյան տակ, ապա գլխի ցանկացած հատվածում մազերն ունենում են նույն երկարությունը:

Շերտերի քանակի ընտրությունը կախված է մազի խտությունից: Հորիզոնական կերպով շերտը վերցնելիս ստեղծվում է անկյուն, իսկ անկյան աստիճանից կախված է շերտերի հաճախականությունը: Երբ մազերը գլխի բոլոր հատվածներում ունեն նույն երկարությունը, հարկավոր է կտրվածքն անել 90° անկյան տակ: Եթե եզրագծի հատվածում մազի չափն ուզում ենք ստանալ երկար, իսկ գագաթում կարճ, ապա անկյան աստիճանը մեծացնում ենք: Կարճից երկար կտրվածք ստանալու համար ցանկալի է աշխատել 45° անկյան տակ: Ամբողջ մազերը մեկ երկարությամբ կտրելու դեպքում անկյան աստիճանը 0° է: Ցանկացած կտրվածքի կատարման ժամանակ հարկավոր է համեմատել աջ և ձախ կողմերը:

Բոլոր կտրվածքները կարելի է բաժանել 2 խմբի՝

1. հակադիր /կոնտրաստ/ կտրվածք, որի դեպքում գլխի մակերևույթի մազերն ունեն տարբեր երկարություն.
2. ոչ հակադիր /ոչ կոնտրաստ/ կտրվածք, որի դեպքում գլխի տարբեր հատվածներում մազերն ունեն նույն երկարությունը:

Ցանկացած կտրվածքի ժամանակ կատարվում է մազաբաժանում՝ աշխատանքը հեշտացնելու նպատակով: Մազերը բաժանում ենք բաժուկնե րի /пробоpы/, որոնք էլ որոշում են ապագա սանրվածքի ձևը: Այդ աշխատանքը հարկավոր է կատարել ճշտությամբ:

Բաժուկը ուղիղ գիծ է, որը գլխի մազածածկույթը բաժանում է երկու հավասար կամ անհավասար մասերի: Այն լինում է հորիզոնական, ուղղահայաց, շառավղային և ճառագայթային:

Հորիզոնական բաժուկը զուգահեռ է հատակի մակերեսին:

Ուղղահայաց բաժուկը ուղղաձիգ է հատակի մակերեսին:

Շառավղային բաժուկը գտնվում է ուղղահայաց կամ հորիզոնական բաժուկների նկատմամբ՝ 45° անկյան տակ, ինչն էլ կտրվածքի ժամանակ հնարավորություն է տալիս ստանալու մազերի առավել երկարություն: Ճառագայթային բաժուկներն սկիզբ են առնում մի կետից:

Հարցեր

Ինչպիսի՞ նախապատրաստական աշխատանքներ է հարկավոր կատարել մազերը կտրելու համար:

_____

_____

_____

Թեմա1.2Մազաբաժանման կատարում







1.Վերևի ծոծրակային
2.Ներքևի ծոծրակային
3.Գագաթային
4.Քունքային

Հորիզոնական բաժուկը անցնում է մի ականջից մյուսը մինչև ծոծրակի ուռուցիկ մասերը:

Ուղղահայաց բաժուկն սկսվում է ճակատի մեջտեղից և վերջանում ծոծրակի մեջտեղում:



Սլաք-բաժուկն /«сагиттальный» լատ.՝ sag- itta սլաք/ սկսվում է մի ականջից և հասնում է մինչև մյուս ականջը՝ անցնելով գլխի ամենա- բարձր կետով: Այն բաժանում է գլուխը ճա- կատային- գագաթային և ծոծրակային հատ- վածների:

Գլխի ամենաբարձր կետը գտնվում է գագաթային հատվածում, որտեղ գլխին դրված սանրն ընդունում է հորիզոնական դիրք:



Կողմային բաժուկն առանձնացնում է գագաթային հատվածը քունքային հատվածից: Կողմային բաժուկը ճակա- տային փոսիկից մինչև սլաք- բաժուկն ընկած հատվածն է:

Այս բոլոր բաժուկների միջոցով ստանում են գագաթային, երկու քուն- քային, վերևի և ներքևի ծոծրակային հատվածներ:

Հարցեր

Ի՞նչ է բաժուկը:

_____

_____

_____

Մազաբաժանման քանի՞ տեսակներ կան:

_____

_____

_____

_____

_____

_____

_____

Արդյունք 2.Կատարել մազերի կտրում ըստ հրահանգի

Թեմա2.1 Մազերի կտրում ՝ կտրման տարբեր մեթոդների և հնարքերի կիրառմամբ

Ժամանակակից կտրվածքները կատարվում են ինչպես թաց, այնպես էլ չոր մազերի հենքի վրա:
Չոր մազերով կտրվածք կատարելու համար մազերը լվանում են և թե- թևակի չորացնում: Կտրվածքի ժամանակ մազերն անընդհատ սանրում են և հետևում, որ դրանք թափվեն իրենց բնական աճի ուղղությամբ: Չոր մա- զերի վրա կտրվածք կատարելու ընթացքում անհրաժեշտ է հնարավորինս ուժեղ ձգել մազափունջը:
Սովորաբար կտրվող մազերի երկարությունը և սանրվածքի հիմնական ուղղությունները որոշվում են թաց մազերի վրա: Հարկավոր է հետևողա- կան լինել, որ բոլոր մազերը թրջվեն հավասարաչափ: Կտրվածքն իրակա- նացնելիս հարկավոր է այս հանգամանքը հաշվի առնել, քանի որ թաց մազերը 0,5 սմ -1 սմ ավելի երկար են երևում, քան չոր մազերը: Հատկապես պետք է ուշադիր լինել գանգուր /ալիքաձև/ մազերի հետ աշխատելիս:
Մազերը կարելի է թրջել նաև հեղուկացրի միջոցով՝ ձեռքի ու սանրի օգնությամբ խոնավությունը տարածելով գլխի ողջ մակերեսով:
Կարճ մազերը կտրելուց հետո հարկավոր է դրանք մեկ անգամ լվանալ՝ կտրատված մազերը հեռացնելու նպատակով /սա պարտադիր չէ երկար մազերի պարագայում/: Կտրելուց հետո հարկավոր է մազերը չորացնել՝ ցույց տալով հաճախորդին, թե ինչպես կարելի է հարդարել տվյալ կտրվածքը:

Երկար մազերի կարճացում

Երկար մազերի կարճացումը կատարվում է և՛ մկրատի, և՛ ածելիի օգ- նությամբ: Ածելիով աշխատելու ժամանակ անհրաժեշտ է սանրած մազա- փունջը բռնել բթամատով և ցուցամատով, այնուհետև ածելին մոտեցնել մազերին՝ ուղիղ անկյան տակ: Այս ձևով մշակվում են միայն թաց մազերը:
Երկար, ոչ խիտ մազերը կարելի է կարճացնել մկրատով: Մազափունջը պտտեցնում են՝ վերածելով զսպանակի նմանվող ամուր հանգույցի: Դրա- նից հետո կտրման գիծը ուղիղ մկրատով հավասարեցնում են այնպես, որ մազերի երկարությունը նախատեսվածից 2-3 սմ-ով ավելի լինի:
Երկար մազերը կարելի է կտրել տարբեր ձևերով: Եթե մկրատը բռնենք մազերի առանցքին ուղղահայաց, ապա կտրվածքը կունենա շրջանի ձև և այն կանվանենք «ուղիղ»: Իսկ եթե մկրատը բռնենք մազերի առանցքի նկատմամբ՝ որոշակի անկյան տակ, ապա կստանանք ձվաձև կտրվածք,

որն էլ կանվանենք «շեղ»:
Կտրվածքի ձևը որոշելուց հետո հաճախորդի մազերը լվանում են, ծած- կում նրան թիկնոցով և անցնում կտրման բուն գործընթացին:

Մազափնջերի մշակման ձևերը

Ներկայացվում են մազափնջերի մշակման (կտրման) հետևյալ ձևերը՝

- ներքին.
- արտաքին.
- կարճացում և ֆիլիրովկա՝ «պոյնտինգ» (пойнтирование).
- մազերի հանում (выщипывание).
- սահող կտրվածք՝«սլայսինգ»(слайсинг):

Մազերի ներքին կտրումն օգտագործվում է մազերը կարճացնելու, եզրակտրման և տարբեր կտրվածքների ժամանակ: Գործողությունը կատարելիս վարսավիրի ափը շրջված է դեպի իր կողմը, և մազա- փունջը գտնվում է նրա մատների արան- քում՝ ափի մեջ: Մազափնջի ներսի հատվա- ծի երկարությունը ստացվում է փոքր-ինչ կարճ, քան վերևինն է:



Մազերի կտրում՝ ձեռքի արտաքին մասի վրա:

Մազերի արտաքին կտրումը կիրառվում է տարբեր կտրվածքների ժա- մանակ:

Դրա արդյունքում մազափնջի վերևի մասը ստացվում է ավելի կարճ, քան ներքևինն է:

«Պոյնտինգ» մազերի կարճացում և ֆիլիրովկա

(пойнтирование)

Պոյնտինգ (անգլ. նշանակում է point - կետ): Այն որպես հիմական հնար լայնորեն կիրառ- վում է վարսավիրական գործում: Դրա միջո- ցով իրականացվում է միաժամանակ և՝ մա- զերի կարճացում, և՛ ֆիլիրովկա, ընդ որում՝ կտրման եզրագիծը նման է ծոփքերի: Նման կտրումը կիրառվում է սանրվածքների մոդե- լավորման ժամանակ՝ մազերին հաղորդելով փարթամություն: «Պոյնտինգ» կարելի է իրա- կանացնել և՛ մատների, և՛ սանրի վրա:

«Պոյնտինգ» հնարի կատարումը

Մազերի հանում

(выщипывание)

Մազերի կտրման այս ձևը ենթադրում է մազարմատներից բարձր ֆի- լիրովկա կատարելու հիմական հնար: Մազերի կտրտման արդյունքում դրանց հաղորդվում է ծավալ:

Մազարմատից բարձր ֆիլիրովկա՝ մազերը հանելու հնարով:

Մոդելավորման ժամանակ «Մազերի հանման» հնարով կարելի է ստանալ տարբեր բարձրություններ ունեցող մա- զափնջեր:

Մազերի հանումն իրականացվում է սանրի և ուղիղ մկրատի օգնությամբ:

Մազերը սանրի միջոցով բարձրաց- վում են և մկրատի ծայրով կտրվում՝ ընտրված երկարությամբ և անհրաժեշտ քանակով: Կտրման ընթացքում մազերը կարելի է մատներով ուղղակի բռնել:

Մազերի սահող կտրվածք

(слайсинг)

Սլայսինգ (անգլ. slice – շերտ): Սա սահող կտրվածք է, որը կատարվում է ուղիղ մկրատի կամ ածելիի միջոցով՝ մազարմատից որոշակի տարածու- թյուն պահելով: Սլայսինգն իրականացվում է և՛ թաց, և՛ չոր մազերի պա- րագայում՝ մկրատի կիրառմամբ: Մկրատը բռնում են մազերին զուգահեռ և սահող շարժումներով կտրում՝ սկսելով մազերի արմատներից և վերջաց- նելով ծայրերում: Կտրման այս մեթոդը կիրառում են, երբ մազերը կտրում են շերտերով: Ցուցամատի և միջնամատի օգնությամբ բռնում են մազա- փունջը ուղղահայաց դիրքով և կիսաբաց մկրատով սահեցնելով կտրում:

«Սլայսինգ»-ի ժամանակ աշխատում է նաև ձախ ձեռքը, որը մազափունջը

պահում է 45° անկյան տակ: Այն կարող է կատարվել մազափնջի ցանկացած բարձրու- թյան վրա:

Սլայսինգի կատարումը

Այս տեխնիկայով կտրվածքը ինչ-որ չափով նման է ածելիով արված կտրվածքին, սակայն այն տարբերությամբ, որ ածելիի կիրառման ժամանակ սանրվածքն ավելի էքստրավա- գանտ է /ծայրաստիճան արտասովոր/ և ունի մեծ ծավալ: Ածելիի առավելությունը նաև այն է, որ դրանով կարելի է կտրել նույնիսկ կարճ մազերը, ինչը հնարավոր չէ «սահող» կտրման տեխնիկա կիրառելիս:

Ոլորած մազափնջերի կտրումը

Ոլորած մազերի կտրումը կատարվում է ուղիղ մկրատով, ուղիղ կտրվածքով կամ ֆիլիրովային մկրատով, սահող կտրվածքով՝ ստեղծելով մազերի տարբեր բարձրություն- ներ:

Ոլորած մազափնջի կտրվածքը՝ մազերի ծայրերի յուրօրինակ ֆիլիրովկա է: Սակայն պետք է հաշվի առնել, որ վերջնարդյունքը կախված է և՝ ոլորած մազերի հաստությունից, և՝ դրանց կտրման բարձրությունից, և՝ օգտա- գործվող գործիքից:

Ոլորած մազափնջի կտրումը եզրակտրման ժամանակ ուղիղ կտրվածքի հնարով:

Ոլորած մազափնջի կտրումը «սահող» կտրվածքով:



Ոլորած մազափնջի կտրումն ուղիղ կտրվածքով՝
ա. ուղղաձիգ
բ. զուգահեռ մազերի նկատմամբ:

Մազերի կտրտում՝ ուղիղ մկրատով

«прореживание»
Նման ձևով մազերի կտրումը բարելավում է մազերի արտաքին տեսքը: Մկրատը պետք է բռնել մազերին զուգահեռ: Կարելի է աշխատել ինչպես մկրատի ամբողջ կտրող հատվածով՝ /ստացվում է խորը ֆիլիրովկա/, այնպես էլ դրա մի մասով:

Մազերի կտրտում՝ ուղիղ մկրատով:

Հարցեր

Մազափնջերի մշակման (կտրման) քանի՞ ձև գոյություն ունի։

_____

_____

_____

Ինչպե՞ս է կատարվում մազերի ներքին կտրումը։

_____

_____

Ինչպե՞ս է կատարվում մազերի արտաքին կտրումը։

_____

_____

Ի՞նչ է նշանակում «պոյնտինգ»։

_____

_____

Ի՞նչ է նշանակում «սլայսինգ»։

_____

_____

Թեմա2.2 Մազերի կտրում՝ մկրատով

Մազերի ցանկացած կտրվածք վարսավիրը կարող է իրականացնել տարբեր գործոյթների կամ հնարների միջոցով։ Դրանցից են՝ «տուշովկա» (тушевка), «եզրագծով կտրում» (окантовка), «ֆիլիրովկա» (филировка), կտրվածք «մատների վրա», «մազերի զրոյական վիճակ» (на нет), «գրա- դուիրովկա» (градуировка) և այլն։

Մինչև այս հնարների ուսումնասիրումը, անհրաժեշտ է հստակ պատկերացում ունենալ, թե ի՞նչ է «ստուգիչ մազափունջը» և ինչպե՞ս իրականացնել «մազափնջերի ձգում» գործոյթը։

Ստուգիչ մազափունջ

(контрольная прядь)

Անկախ սանրվածքի ընտրությունից՝ առաջին հերթին անհրաժեշտ է որոշել կտրվածքի ցանկալի երկարությունը։ Կտրելով առաջին մազափունջը՝ մնացածները հավասարեցվում են դրան (կամ հակառակը՝ ոչ թե հավասարեցվում են, այլ երկարացվում կամ կարճացվում են ըստ դրա)։ Դա հենց ստուգիչ մազափունջն է, որի քանակը տարբեր սանրվածքների դեպքում կարող է լինել տարբեր։ Սակայն կատարման տեխնոլոգիան բոլոր դեպքերում էլ նույնն է։ Ստուգիչ մազափունջն առանձնացնելուց հետո հաջորդ մազափունջը վերցնում են՝ միաժամանակ ընդգրկելով կա՛մ ստուգիչ մազափունջն ամբողջությամբ, կա՛մ մասամբ և կտրում են անհրաժեշտ չափով։



Մազերի կտրում՝ ըստ ստուգիչ մազափնջի ձգման 90°-ով:

Մազերի կտրում մազափնջի ձգման 0°-ով:

Ծոծրակային հատվածի մազերի կտրում՝ ըստ ստուգիչ մազափնջի:

Մազափնջերի ձգում

(оттяжка прядей волос)

Զրոյական ձգում

Այս հնարը ենթադրում է ձգված մազափնջի որոշակի դիրք գլխի նկատմամբ: Նկարագրելով այս հնարը՝ սովորաբար ասում են.

«Մազափունջը կտրում են՝ ձգելով այսքան աստիճան»: Սա նշանակում է, որ մազափունջը գլխի մակերեսի նկատմամբ կազմում է այնքան աստիճան, որքան նշվում է:



Մազափնջի ձգում 15° -ով:

Մազափնջի ձգում 15°-ով:

Յուրաքանչյուր հաջորդ մազափնջի թեթևակի ձգումը 10-15°-ով ստեղծում է վերև բարձրացող մազերի էֆեկտ: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ մազափունջը կտրվում է նախոր- դի մակարդակին հավասար:

Մազափնջի ձգում 90°-ով:

90°-ի ձգման ժամանակ մազափունջը պետք է գլխի նկատմամբ լինի ուղղահայաց:
Մազափնջերի ձգումը՝ մազերի մոդելավորման հիմնա- կան հնարն է: Ավելացնելով կամ պակասեցնելով մա- զափնջի ձգման աստիճանը՝ կարգավորում են դրանց երկարությունը, և սանրվածքն ուրվանկարվում է:

Կտրվածք «մատների վրա»

- Անհրաժեշտ գործիքներ՝ ուղիղ մկրատ, սանր:
- Կատարվում է ինչպես թաց, այնպես էլ չոր մազերի հենքի վրա:
- Կիրառվում է գործնականում բոլոր տեսակի սանրվածքների ժամանակ:
- Կատարման հերթականությունը. գագաթի հատված, քունքի և ծոծրակի հատվածներ:

Սա ամենապարզ հնարներից է և կիրառվում է՝

- Երբ հարկավոր է կարճացնել բավականին երկար մազերը հիմնական սանրվածքից առաջ:
- Ստուգիչ կտրվածքի ընթացքում, երբ պետք է կտրել առանձին մազեր, որոնք խաթարում են հիմնական սանրվածքի տեսքը:

Կտրվածքը կատարելու ժամանակ վարսավիրը պետք է կանգնի հաճախորդի թիկունքում և սանրի նրա մազերն իրենց բնական աճի ուղղությամբ: Սանրը տանի հաճախորդի մազերի մեջ՝ սկսած դեմքի մասից և շարժի դեպի իրեն: Կտրվածքի իմաստն այն է, որ գլխի ողջ մակերեսի մազերը կարճացվում են նույն երկարությամբ: Ընդ որում՝ մազափնջի երկարությունը որոշվում է մեկ անգամ, իսկ հաջորդները կողմնորոշվում են ըստ դրա: Ամեն նոր մազափնջի հետ վերցնում են նաև նախորդ՝ արդեն կտրված մազափունջը ամբողջովին կամ մասամբ և կտրում նույն անհրաժեշտ երկարությամբ:

Մազերի հանում մատների վրա գա- գաթի հատվածում՝ ըստ ստուգիչ մազափնջի:





Մազերի հանում մատների վրա
ձեռքի ափի ներսի կողմից:

Ծոծրակի հատվածի մազերի
հանում մատների վրա:

Մազերի հանում մատների
վրա
/սանրի վերևի հատվածը ցույց է տա-
լիս մազափնջի կտրման սահմանը/:

Մազերի հանումը սանրի վրա

z Անհրաժեշտ գործիքներ՝ ուղիղ մկրատ, համակցված տեսակի սա- նր:

z Կատարվում է ինչպես թաց, այնպես էլ չոր մազերի վրա:

z Կիրառվում է կարճ կտրվածքների ժամանակ:

z Կատարման հերթականությունը. գագաթի, քունքի, ծոծրակի հատ-

վածներ:

Մկրատի և սանրի օգնությամբ հնարավոր է իրականացնել ցանկացած

սանրվածք, այդ թվում՝ նաև շատ կարճ: Օրինակ՝ մազերը սանրի վրա հա-

նելու հնարի միջոցով: Սակայն պետք է հաշվի առնել, որ այս հնարը կի-

Կտրվածքի կատարում

Խիտ ատամներով սանրը խրում են մա- զերի մեջ՝ պահելով այն 30-40° անկյան տակ:

Աշխատել մազափունջը սանրի վրա պահել՝ ուղղաձիգ գլխին համեմատ:

Մկրատը սանրին զուգահեռ պահել: Սանրը շարժել մազերի աճմանը հակա-

ռակ և կտրել հենց սանրի վրա՝ որսալով այն հարմար պահը, երբ մազերը գտնվում են ուղղահայաց դիրքում:

ռառվում է, երբ երկար մազերն արդեն կտրված են և դրանց երկարությունը

չի գերազանցում 3 սմ-ը:

Մազերի հանումը սանրի վրա:

Հարցեր

Ի՞նչ է նշանակում «ստուգիչ մազափունջ» բառակապակցությունը:

_____

_____

Ի՞նչ է նշանակում «մազափնջերի ձգում» բառակապակցությունը:

_____

_____

Թեմա2.3 Մազերի կտրում՝ սրիչով

Կտրվածք «Մազերի զրոյական վիճակ»

/ածելիի օգնությամբ /

Սովորաբար ածելիի օգնությամբ մազերը զրոյական վիճակի են բերում կարճ սանրվածքների ժամանակ: Կտրվածքն սկսում են ծոծրակի ներքևի հատվածից:

Այստեղ վերևի սահմանը՝ սանրվածքի առավել ծավալ ունեցող մասի եզրագիծն է, որը ձգվում է մոտավորապես մի ականջի վերևի կետից մինչև մյուս ականջի վերևի կետը՝ անցնելով ծոծրակի բարձր հատվածով:

Այդ հատվածի մազերն սկզբում սանրում են ուղղաձիգ բաժուկի նկատմամբ 45° անկյան տակ դեպի մի կողմ, հետո կտրում՝ հերթագայելով սանրը և ածելին: Այնուհետև նույն գործողությունը կրկնում են՝ սանրելով մազերը 45°-ի տակ դեպի հակառակ կողմ:



Սանրի և ածելիի հերթագայումը տեղի է ունենում բավականին ռիթմիկ. սանրը տեղաշարժվում է ներքև, ածելին գտնվում է մազափնջի սկզբում, ածելին սահում է ներքև՝ սանրը վերադառնում է մազափնջի սկիզբ և վերսկսում իր գործողությունը: Ածելիի յուրաքանչյուր սահելու գործողությունից հետո /համապատասխանաբար մազերի կտրումից/ ելման դրությունը 1,5-2 սմ-ով տեղաշարժվում է փոքր-ինչ ներքև նախորդ ելման դրության նկատմամբ:

Կտրվածքի կատարման ժամանակ ածելին ողջ լայնքով սեղմվում է մազերը վրա: Բայց քա-

Ածելիով զրոյական վիճակի հասցնելու կտրվածք:

նի որ մեր նպատակն է աստիճանաբար պակասեցնել մազերի երկարությունը ծոծրակի եզրագծային հատվածում և այն հասցնել «զրոյական վիճակի», ուստի ածելիի սեղմումը՝ դեպի ներքև իջնեցնելով, պետք է ուժեղացնել: Իսկ դա նշանակում է, որ այդ գործողությունը կատարելիս վարսավիրի ձեռքերը պետք է աշխատեն վստահ:

«Տուշովկա»

z Անհրաժեշտ գործիքներ՝ մկրատ կամ ածելի /ածելին աշխատում է թաց մազերի վրա/ սանր:
z Կատարվում է մկրատով ինչպես թաց, այնպես էլ չոր մազերի վրա, իսկ ածելիով՝ միայն թաց մազերի:
z Պահանջվում է որոշակի հմտություն:

«Տուշովկան» կտրվածքի կատարման վերջնական փուլ է, որը «զրոյա- կան վիճակ» սանրվածքը հասցնում է հարթ մակերեսով հղկված իդեալա- կան տեսքի: Դրա նպատակն է ապահովել սահուն անցում երկար մազերից դեպի կարճը՝ գլխի մազածածկույթին հաղորդելով «լաքապատված» տեսք:
«Տուշովկայի» կատարման տեխնոլոգիան:
Այստեղ կտրման մեթոդը նույնն է, ինչ որ «զրոյականի» դեպքում. կատարվում է քունքակողմեային և ծոծրակային հատվածներում: Կիրառվում են և՝ ուղիղ, և՝ ֆիլիրովային մկրատներով:
«Տուշովկա» իրականացնելու համար հարմար է վերցնել շատ բարակ ատամներով սանր և աշխատել միայն մկրատի ծայրերով: Մկրատը պետք պահել սանրի նկատմամբ փոքր-ինչ թեքությամբ:
Սանրը տանում են մազերի մեջ՝ դրանց աճման եզրային հատվածի կողմից, գլխամաշկին բավականին կիպ: Սանրը և մկրատը միաժամանակ շարժվում են վերև. մկրատը պետք է պահել սանրի նկատմամբ փոքր-ինչ թեքությամբ: Սանրի թեքման անկյունից է կախված սահուն անցումների ապահովումը: Աշխատում է մկրատի 1/3 մասը:
Պարանոցի հատվածի «տուշովկան» կարելի է կատարել է կտրտման /«подсечки»/ մեթոդով, որի էությունը հետևյալն է. սանրը պետք է ներքևից խրել պարանոցի մազերի մեջ և գլխի նկատմամբ բարձրացնել ուղղահայաց դիրքով: Սուր ածելիով, որի կտրող մասը պետք է գտնվի սանրի նկատմամբ 15-20° անկյան տակ, կտրվում են ցցված մազերը: Ածելին պետք է շարժվի սան- րի ատամների նկատմամբ ուղղահայաց:

«Տուշովկա» կատարելու գծապատկերը:

Ֆիլիրովկա

- Անհրաժեշտ գործիքներ՝ ֆիլիրովային մկրատ, ուղիղ մկրատ, ածե- լի, սանր:
- Կատարվում է մկրատով, ինչպես չոր, այնպես էլ թաց մազերի վրա, իսկ ածելիով՝ միայն թաց մազերի վրա:
- Դժվարություն չի ներկայացնում սկսնակ վարսավիրների համար:

Վարսավիրական պահոցում բավականին շատ հնարներ կան մազերի արտաքին տեսքը բարելավելու, դրանց ծավալ և փարթամություն հաղոր- դելու համար: Այդպիսի հնարներից է մազերի ֆիլիրովկան, որի արդյուն- քում ստեղծվում է մազերի երկարության բնական համապատասխանու- թյուն: Այլ կերպ ասած, ֆիլիրովկան մազերի կտրում է՝ դրանց երկարության պահպանմամբ: Ֆիլիրովկայի ժամանակ մազերը կտրտվում են տարբեր երկարության վրա:

Ֆիլիրովկա կատարում են ֆիլիրովային և ուղիղ մկրատներով, վտան- գավոր կամ ֆիլիրովային ածելիով:

Մազերի ֆիլիրովկա կատարում են, որպեսզի՝

- սանրվածքին որոշակի ծավալ հաղորդեն /մազափունջը ենթարկում են ֆիլիրովկայի կամ մեջտեղում, կամ արմատից թողնելով 2-3 սմ/.
- ծավալը քչացնեն /մազափունջը ենթարկում են ֆիլիրովկայի մա- զարմատի մոտ, մեջտեղում և ծայրերում/.
- հարդարումը հեշտացնեն /մազափունջը ենթարկում են ֆիլիրովկայի մազերի ծայրերում/:

Ֆիլիրովկան կատարվում է մազերի արմատների մոտ, մազերի ծայրերին և մազափնջերի տարբեր բարձրության վրա:

Արմատների մոտ կատար- վող ֆիլիրովկայի ընթաց- քում մազափնջի սանրումը:

Սանրվածքին ծավալ հաղորդելու նպատա- կով կատարում են ֆիլիրովկա մազերի արմատ- ների մոտ: Այն կատարվում է «մազերը դուրս հանելու» /«выщипывание»/ մեթոդով՝ գազաթի և ծոծրակի վերևի հատվածներում: Մազերին ծա- վալ հաղորդելու համար մազափունջը սանրում են նոսր ատամներ ունեցող սանրով՝ այն վերև բարձրացնելով և 0,5 -1 սմ հատվածից հետո, մկրատի ծայրով դուրս հանելով, կտրտում են առանձին բարակ մազափնջեր /1-2 միջատամ- նային հատվածի հեռավորությամբ/: Մազափնջի երկարությունը 2-4 սմ է՝ կախված ընտրած կտր- վածքի երկարությունից:

ՍԼԱՅՍԻՆԳ

Պոյտինգ

ՆՈՐԱՁԵՎ ԿՏՐՎԱԾՔ



ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ՄԱԶԵՐԻ ԿՏՐՈՒՄ

Մազերի ֆիլիրովկա՝ ֆիլիրովային ածելիով

Մազերի ֆիլիրովկա՝ ֆիլիրովային ածելիով:

Գոյություն ունի հատուկ ֆիլիրովային գործիք, որով բավական հեշտ է աշխատելը: Ֆիլիրովային ածելին տանում են վեր բարձրացրած մազափնջի մակերեսով՝ մազարմատներից կամ մազերի մեջտեղի հատվածից սկսած /դա կախված է մազերի խտությունից/ դեպի մազերի ծայրերը:
Ֆիլիրովային ածելին պետք է մազերին պահել համարյա զուգահեռ: Գործողությունը կրկնում են 4-5 անգամ:

Մազերի ֆիլիրովկա՝ ֆիլիրովային վտանգավոր ածելիով

Այս հնարը բավականին բարձրացնում է մազերի կտրվածքի որակը: Վտանգավոր ածելիով ֆիլիրովկան, նույնիսկ նոսր մազերի դեպքում, հատկապես գագաթի և ծոծրակի հատվածներում, սանրվածքին ծավալ է հաղորդում: Վտանգավոր ածելիով ֆիլիրովկան

Մազերի ֆիլիրովկա՝ վտանգավոր ածելիով:

կատարվում է միայն թաց մազերի վրա: Մի ձեռ- քով սեղմում են մազափունջը՝ ձգելով այն ընտր- ված անկյան տակ: Եթե խիտ են մազերը, ֆի- լիրովկան սկսում են արմատներից ավելի մոտ հատվածից:

Ֆիլիրովկայի սկզբում ածելին սրաեզրային ողջ մակերեսով սեղմում են մազերին:

Հասցնելով ածելին մինչև մազերի նշված կտրվածքը՝ պետք է ավելացնել ածելիի թեքու- թյան անկյունը: Գործողությունները պետք է կրկ- նել 2-3 անգամ, իսկ եթե անհրաժեշտ է առավել ծավալ հաղորդել, ապա պետք է այն 3-5 անգամ կատարել:

Հարցեր

Ի՞նչ է նշանակում «մազերը զրոյական վիճակում»:

_____

_____

_____

Նկարագրեք «տուշովկայի» կատարման տեխնոլոգիան:

_____

_____

_____

Ինչպիսի՞ գործիքներով են կատարում ֆիլիրովկա:

_____

_____

Ի՞նչ է նշանակում «գրադուիրովկան»:

_____

_____

Թեմա2.4Կտրման գործողությունների հաջորդականության պահպանում

Հստակ կտրվածքների մեթոդներ

Մազերի կտրվածք «մազափունջը մազափնջի հետևից» մեթոդով

«Մազափունջը մազափնջի հետևից» կտրվածքի ժամանակ մազափնջերը սանրում են զուգահեռ բաժուկներով: Յուրաքանչյուր նախորդ մազափունջը ստուգիչ է հաջորդ մազափնջի համար: Այն հստակ հավասարեցվում է նախորդ մազափնջի հետ և կտրվում է նույն մակարդակ վրա: Մազափնջի ձգման անկյունը կարող է փոփոխվել՝ միաժամանակ ենթարկելով փոփոխման նաև մազափնջի երկարությունը:

«Մազափունջը մազափնջի հետևից» մեթոդի առավելությունը կայանում է նրանում, որ նման սանրվածքի հարդարումը բարդ չէ:

Ծոծրակային վերևի հատվածի կտրում մազափունջը մազափնջի հետևից մեթոդով:

Քունքային հատվածի կտրում մազափունջը մազափնջի հետևից մեթոդով:

Մազերի կտրվածք մազափունջը մազափնջի վրա մեթոդով

Այս մեթոդի էությունը հետևյալն է՝

- ընտրվում է մեկ ստուգիչ մազափունջ.
- բոլոր մյուս մազափնջերը՝ կախված ընտրված սանրվածքի տեսակից, կարող են լինել նաև տարբեր ուղղություններով.
- սանրվում են բաժուկներով, դրվում են ստուգիչ մազափնջի վրա և կտրվում ՝ ճիշտ դրա երկարությանը համապատասխան.
- ձգման անկյունը նույնպես կարող է լինել տարբեր:

Ստուգիչ մազափունջը կարող է որոշվել սանրվածքի ներքևի ուրվագծին համապատասխան, օրինակ՝ «կառե» սանրվածքի ժամանակ: Այն կարող է նաև յուրովի ձևավորվել՝ կախված կտրվածքի տարբեր փուլից և գլխի տարբեր հատվածներից:

Այս մեթոդի ընթացքում մազերի երկարությունը կախված է ամեն հաջորդ մազափնջի ձգման անկյունից՝ ստուգիչ մազափնջի համեմատ: Եթե մազափնջերի սանրման ժամանակ ձգման անկյունը մեծացնեն, ապա վերևի մազափնջերը կստացվեն ավելի կարճ, քան ներքևինները:

Ամեն նախորդ մազափնջի ձգման անկյունը փոքրացնելով՝ հնարավորություն է տրվում ավելացնելու մազափնջի երկարությունը:

«Կառե» սանրվածքի կտրումը«մազափունջը մազափնջի վրա» մեթոդով:



Մազափնջի ձգման անկյան մեծացումը նպաստում է մազափնջի կարճացմանը:

«Կառե» սանրվածքը՝«մազափունջը մազափնջի վրա մեթոդով»:

Եթե մազերի կտրումն իրականացվում է նույն մակարդակով՝ առանց ձգման անկյունի կիրառման, ապա հարկավոր է հաշվի առնել, որ մազերը չորանալու ընթացքում փոքր-ինչ բարձրանում են վերև և դրանք կարող են ավելի կարճ ստացվել, քան ներքևինները:

Հարցեր

1.Նկարագրե՛ք «մազափունջը մազափնջի հետևից» մեթոդը:

_____

_____

_____

2.Նկարագրեք« մազափունջը մազափնջի վրա» մեջոդը:

_____

_____

_____

Թեմա2.5Աշխատանքի ավարտական գործողություններ

Մազերի կտրվածքային մեկ գծի ստեղծումը

Որպեսզի կտրվածքի ներքևի գիծը մազերի համար լինի ընդհանուր, հարկավոր է մազափնջերը կտրել ձգման զրոյական անկյունով:

Օրինակ, ինչպես բռնել և կտրել ծոծրա- կի մազափնջերը, որպեսզի մազերի համար ստացվի մեկ ընդհանուր գիծ. հարկավոր է առաջին մազափունջը հորիզոնական բա- ժուկով սանրել այնպես, որ մազերը հստակ պառկեն պարանոցի վրա՝ չառանձնանալով իրարից ոչ մի աստիճանով:

Այնուհետև հաջորդ մազափունջը հստակ սանրել դեպի ներքև՝ չստեղծելով ոչ մի ան- կյուն մազափնջի և գլխի միջև:

Երկրորդ մազափունջը կտրել 1 մմ-ով ներքև, քան առաջինը:

Եվ այսպես կտրել յուրաքանչյուր հաջորդ մազափունջ՝ մինչև գլխի գագաթը:

Թե՛ մազափունջը մազափնջի հետևից,

թ՛ե մազափունջը մազափնջի վրա կտրվածքները կատարվում են թաց մազերի վրա:



Մազափունջը մազափնջի վրա՝ մեկ ընդհանուր կտրման գիծ ստանալու մեթոդի կիրառմամբ:

Շատ կարևոր է, որ բոլոր մազերը թրջված լինեն հավասարաչափ:

Այս երկու մեթոդները կարող են կատարվել և՝ ուղիղ, և՝ ֆիլիրովային

մկրատներով:

Գրադուիրովկա

«градуирование»

Մազերի մոդելավորման հիմնական խնդի- ը մազափնջերի երկարությունների փոփո- խությունն է գլխի տարբեր հատվածներում, ինչն էլ հնարավորություն է տալիս ստանալու տարբեր սանրվածքներ: Սա իրականացվում է «գրադուիրովկա» հնարի միջոցով: Այս բառը ծագել է աստիճան /«градус»/բառից և նշանակում է, որ մազափնջերը կտրվում են գլխի նկատմամբ՝ որոշակի անկյան տակ:

Գրադուիրովկայի արդյունքը՝ այս կամ այն մազերի կտրման գիծն է սանրվածքում:

Ծոծրակային հատվածի «գրադուիրովկա»:

Այսպիսով, մազերի գրադուիրովկան՝ մազափնջերի ձգման անկյունների փոփոխությունն է, սահուն կամ հակադիր ուրվանկարներ ստանալու նպատակով:

Օրինակ, եթե «կառե» սանրվածքը կատարվում է զրոյական անկյան տակ, ապա բոլոր մազերը ունենում են մի ընդհանուր կտրման գիծ, իսկ «կառե» սանրվածքի կատարումը «գրադուիրովկա» մեթոդով՝ մազափնջերը ձգվում են որոշակի անկյան տակ, և արդյունքում ստացվում է բոլորովին այլ սանրվածք:

«Գրադուիրովկան» նաև առանձին մազերի կտրվածքի մեթոդ է, որի ընթացքում մազերը սանրվում են ուղղահայաց բաժուկներով, իսկ կտրման
գիծը անցնում է գլխի նկատմամբ սուր կամ բութ անկյան տակ:

Մազերի երկարացման սահուն անցումը

Մազափնջի ձգման անկյունի գծապատկերը՝ մազերի կտր- ման սահուն գիծ ստանալու ժամանակ:

Մազափնջերի երկարության կտրման գիծը ստացվում է առավել սահուն, երբ ամեն հաջորդ մազափնջի ձգման անկյունը, սկսած 0°-90°, նախորդ մազափնջի համեմատ աստիճանաբար ավելանում է: Որպեսզի գրադուիրովկայի կտրման գիծը ստացվի առավել սահուն, մազափնջերը պետք է վերցնել բավականին բարակ: Դրանք լավ ձգել և խնամքով հստակ հավասարեցնել արդեն կտրված մազերին:

Եզրագծով կտրում

«окантовка»

Մազերի կտրումը եզրագծով՝ սանրվածքի ներքևի ուրվագծի կամ էլ հենց եզրագծի ստեղծման գործընթացն է:

Մազերի աճման եզրագիծը անցնում է ամբողջ գլխի շրջագծով: Այնուամենայնիվ, «կտրել եզրագծով» պետք է հասկանալ ծոծրակի, քունքի հատվածների, ճակատի մազափնջի եզրերի կտրում մեկ ընդհանուր գծով:

Եզրագծով կտրման արդյունքում ստեղծվում է մազերի բնական աճը սահմանափակող հստակ գիծ: Այն ապագա կտրվածքի ուրվագիծն է: Այն կարող է լինել ուղիղ, ձվաձև, եռանկյունաձև, անհամաչափ, անհավասար կտրտված մազափնջերով: Մազերի եզրագիծ ստանալու համար անհրաժեշտ են՝ ուղիղ մկրատ, ածելի, սանր և մազխուզիչ /այն կարող է օգտագործվել կարճ սանրվածքի համար/: Մազերը կտրման սկզբում պետք է լինեն թաց, իսկ վերջում՝ չոր վիճակում:

Եզրագծերը կարող են լինել ուղիղ, ձվաձև, եռանկյունաձև, անհամաչափ, անհավասար կտրտված մազափնջերով: Այն կարող է սկսվել հենց մազի աճի եզրագծից, ուր մազի երկարությունը կլինի 0 մմ և աստիճանաբար կերկարի (на нет): Եզրագծի կտրման այս տեսակները լայն տարածում ունեն թե' կանացի, թե' տղամարդկանց կտրվածքներում՝ բացառությամբ «չակերտաձևի», որը հատուկ է միայն տղամարդկանց կտրվածքներին:

Կտրվածքը եզրագծվում է մինչև ականջների հատվածը: Ականջները կարող են լինել բաց, կիսաբաց և փակ: Որպեսզի երկու կողմերը լինեն համաչափ՝ որպես չափս ծառայում են ականջները:

Ուղիղ եզրագծով կտրման դեպքում մազերը կարող են ունենալ տարբեր երկարություն: Այս եզրագիծը ստանալու համար հետնամասի մազերը ուղիղ սանրում են ներքև և կտրում ուղիղ գծով: Կտրել սկսում են մեջտեղի հատվածից:

Չակերտանման եզրագիծը կտրվում է համեմատաբար ավելի կարճ՝ մինչև շապիկի օձիքը: Այն ունի ուղիղ և ընդգծված անկյուններ: Այս եզրագիծն ընտրում են՝ հաշվի առնելով հաճախորդի վզի կառուցվածքը: Սա տղամարդու դասական կտրվածքի եզրագիծ է: Ինչպես հետնամասի, այնպես էլ ականջային հատվածի եզրերը կարող են ունենալ տարբեր կառուցվածքներ:

Տղամարդու դասական կտրվածքի ժամանակ ականջային հատվածում մազերը սանրում են ներքև և կտրում ուղիղ կամ շեղ գծով: Այնուհետև մնացած մազերը սանրում են ականջի վրա և կտրում ականջի եզրագծով /ականջի եզրագծից հեռու չի կարելի կտրել/: Մնացած մազերը սանրում են առաջ և ձևավորում եզրագիծը քունքի հատվածում՝ ձուլելով այն ճակատային մազափնջին: Նույն տեխնիկայով կարելի է կտրել նաև ավելի երկար կամ ձևավոր եզրագծեր: Եթե ցանկանում ենք ունենալ անհավասար մազերով եզրագիծ, ապա ականջի հատվածում հարկավոր է սանրը պահել հորիզոնական դիրքով՝ ատամները դեպի վեր՝ մազերը բարձրացնելով մինչև ականջի վերին հատվածը և կտրել, հետո ձախ ձեռքի ցուցամատով և միջնամատով վերցնել մազերը՝ պահելով ուղղահայաց դիրքում 45° անկյան տակ և մշակել ֆիլիյաժով:

Մազերի եզրագծի կտրման ժամանակ պետք է հաշվի առնել հետևյալը՝

z Նախ հաճախորդին հարցնել, թե նա սանրվածքի ինչպիսի՞ եզրագիծ է նախընտրում՝ ուղիղ, կոր, ուռուցիկ, թե՞ կտրտված:

z Այնուհետև ուշադիր ուսումնասիրել հաճախորդի դեմքի, պարանոցի առանձնահատկությունները, քանի որ կտրվածքի եզրագիծը և՛ կարող է թաքցնել որոշ թերություններ, և՛ հակառակը՝ ընդգծել հաճախորդի արտաքին առավելությունները:

z Պետք է ուշադրություն դարձնել հաճախորդի մաշկի վիճակին՝ /գունանյութի խանգարում /«пигментация»/, սպիի, խալի առկայություն, որոնք նույնպես պետք է թաքցնել մազերի տակ:

z Որոշ սանրվածքների ժամանակ մազերի եզրագծով կտրումը կատարվում է սանրվածքի կտրման սկզբում, օրինակ՝ «կառեի» ժամանակ, քանի որ եզրագծով կտրումն այս դեպքում ընտրած սանրվածքի ձևագոյացնող տարրն է, հիմքը:

z Սովորաբար մյուս սանրվածքների ժամանակ եզրագծով կտրումը կատարում են վերջում:

«Կառե» սանրվածքում եզրագծի կտրումը կատարվում է սկզբում:

Դասական «կառեի» եզրագծի կտրում.

աշխատանքի առաջին փուլ:

Եզրագծով կտրման տեխնոլոգիան

Եզրագծով կտրման գործընթացը պետք է կատարել մանրակրկիտ և խնամքով:

Եզրագծով կտրման վերջում պետք է սանրել մազերն աճման ուղղու- թյամբ: Կարելի է նույնիսկ առաջարկել հաճախորդին թեթևակի գլուխը թափահարել:

Եթե մազերը խիտ են և սանրվածքը կարճ է, ապա եզրագծով կտրումը կատարում են ածելիով կամ մեքենայով:

Մազերի դասական եզրագծով կտրում կարճ սանրվածքի դեպ- քում: Եզրագծով կտրումը կա- տարվում է վերջում:

Հաճախ հանդիպող եզրագծով կտրում- ներ կարճ սանրվածքի ժամանակ:

Այս եզրագծով կտրումը կատարված է աշխատանքի վերջում և հետո խորը ֆիլիրովկա է կատարված:

Եռանկյունաձև եզրագծով կտրումը կարող է թաքցնել մազափնջի շրջա- նաձև աճը կամ խալը:
Եզրագծով կտրումը կատարվում է կտրվածքի սկզբում:

«Կառե» սանրվածք, դեմքի մասի մա- զափնջերի երկար տարբերակ:

Այս եզրագծով կտրման ժամանակ օգտագործվել է բնական խոպոպիկը:

Քունքային հատվածի եզրակտրում

Քունքային հատվածի եզրագծով կտրումը նույնպես պահանջում է խնամքով և հստակ աշխատանք:

Դասական քունքային եզրակտրում կարճ սանրվածքի դեպքում: Եզրակտրման գիծը անցնում է ականջի հետևով:

Քունքային եզրակտրում խոր ֆիլիրովկայով, որը ծածկում է ականջը:

Դեկորատիվ եզրագծով կտրումը տվյալ սանրվածքի համար կառուցողական տարր է:

Եզրագիծը շարունակում է «կառեի» գիծը:

Քունքային հատվածի եզրագծով կտրելու տեխնոլոգիան

Գլխամազի տարբեր հատվածների նախնական բաժանման ընթացքում քունքային մազերն առանձնացվում են առանձին բաժուկներով:

Դեկորատիվ եզրագծով կտրումը տվյալ սանրվածքի համար կառուցողական տարր է:

Այս սանրվածքում քունքային հատվածը չի առանձնացվում հատուկ բաժուկով: Այն սանրվածքի ընդհանուր ուրվագծի շարունակությունն է:

Քունքային հատվածի կարճ եզրագծով կտրում:

Մազերի կտրված եզրագիծը զուգահեռ է մազերի աճմանը:

Մազերի եզրակտրում՝ կախված մազերի երկարությունից

Կարճ մազերի եզրակտրում

Կարճ մազերի եզրակտրումը կատարում են ուղիղ մկրատով, մեքե- նայով կամ ածելիով:

Կարճ մազերի եզրակտրման ժամանակ անհրաժեշտ է հաճախակի սանրել հաճախորդի մազերը, որպեսզի ոչ մի մազ բաց չթողնվի, ինչն էլ հետագայում կարող է խանգարել նախատեսած սանրվածքի ճիշտ կա- տարմանը: Պետք է աշխատել մկրատի ծայրերով՝ կտրելով միայն այն մա- զիկները, որոնք դուրս են գալիս մազածածկույթի մակերեսից: Շատ կարճ սանրվածքի դեպքում անհրաժեշտ է լինում հեռացնել պարանոցի, երբեմն էլ քունքային հատվածի

մանր մազերը, որոնք աճում են ընդհանուր մազա- ծածկույթի մակերեսից դուրս: Այս դեպքում արդեն օգտագործվում է աձե- լի: Մաշկը ձգում են մի ձեռքով, իսկ մյուսով հեռացնում են ավելորդ մա- զերը՝ սկզբում ձախ քունքային հատվածից, հետո աջ, ինչպես նաև նույն կողմի ականջախեցու հետևի և պարանոցի մազիկները:

Քունքային հատվածի եզրագծի կտրումը մեքենայով պահանջում է որո- շակի հմտություն:

Եզրակտրումը պետք է կատարել հետևյալ հաջորդականությամբ՝

- քունքային հատված.
- ականջի հետևի ուրվագիծ.
- պարանոց:

Միջին չափի մազերի եզրակտրում: Նախ պետք է մազերը խնամքով սանրել, ձեռքով կամ սանրով սեղմել գլխին և կտրել համապատասխան չափի: Որպեսզի եզրակտրման ընթացքում սանրվածքը ստացվի համա-

չափ, հարկավոր է ստուգել մազափնջերի երկարությունը՝ դրանք մոտեցնե- լով իրար կամ կողմնորոշվելով դեմքի որևէ մասի հետ՝ ականջների, քթի:

Երկար մազերի եզրակտրում: Երկար մազերի եզրակտրումը կատա- րում են ձեռքի վրա՝ ամեն անգամ բռնելով նախորդ անգամ կտրված մա- զափնջից մի հատված:

Եզրագծով կտրում կա- տարվում է ծոծրակի մեջ- տեղից դեպի դեմք:

Մազափնջի համաչափու- թյան որոշում:

Կտրվող մազափնջի չա- փը համաձայնեցնել հա- ճախորդի հետ:

Ճակատի մազափնջերը

/«челка»/

Ճակատի մազափունջը սանրվածքի կարևոր տարր լինելուց բացի՝ նաև սանրվածքի հաջողության բաղադրիչն է: Այն մարդու արտաքինի կարևոր մասն է. դրա առկայությունը կամ բացակայությունը կարող է կտրուկ փո- խել մարդու տեսքը: Մազերի ինչպիսի կտրվածք էլ կատարվի, առաջնա- հերթ խնդիր է ճակատի մազափնջի ձևի որոշումը: Նույնիսկ երկար մազե- րի դեպքում ժամանակ առ ժամանակ ճակատի մազափունջը փոփոխելու խնդիր է առաջանում:

Ճակատի մազափնջերը լինում են կարճ, երկար, կոր, թեք, խիտ, նոսր, երկտակ և այլն:
Դրանք կարելի է բաժանել երկու խմբի
z պարզապես ճակատի մազափունջ.
z որպես սանրվածքի կառուցողական տարր:

Ճակատի մազափնջերի լայնությունը և հաստությունը որոշելը

Ճակատի մազափնջի լայնությունը պայմանավորված է ճակատի լայնությամբ: Այն չպետք է անցնի քունքային փոսիկների տարածքից: Ճակատի մազափնջի համար նախատեսված մազերն առանձնացվում են Π-նման, եռանկյունաձև կամ մազերի աճմանը զուգահեռ բաժուկներով: Ճակատի մազափնջի հաստությունը կախված է մազերի խտությունից, ինչպես նաև հաճախորդի ցանկությունից:



Եռանկյունաձև բաժուկի առանձնացումը ճակատի մազափնջի համար:

Ոչ շատ երկար կտրտված ճակատի մազափունջ:



Ճակատի մազափնջի Π-նման բաժուկի առանձ- նացում:

Ճակատի խիտ մազափունջ, որն ընդգծում է մազերի գերազանց որակը:
Ճակատի դասական մազափունջ երկար կամ միջին երկարության մազերի դեպքում:

Ճակատային մազափնջերի դասական տարբերակներ

Դրանք կարող են լինել ցանկացած տեսակի և երկարության: Ճակատային մազափնջի կտրման համար անհրաժեշտ են հետևյալ գործիքներ՝ ուղիղ մկրատ, ֆիլիրովային մկրատ, սանր: Կարելի է մազերը կտրել նաև ածելիի միջոցով: Ճակատային մազափնջի կտրվածքը կատարվում է թաց մազերի վրա և պահանջում է կոկիկ, մանրակրկիտ աշխա- տանք:

Միևնույն երկարություն ունեցող ճակատային մազափնջերի կտրումը

Այսպիսի ճակատային մազափունջն ունենում է առավել սահուն, ձուլ- ված ուրվագիծ: Այն հատկապես հարմար է ոչ խիտ մազերի կամ ալիքաձև մազերի համար: Մազերը պետք է թացացնել, բաժուկով առանձնացնել ճա- կատային մազափնջի հատվածը և ամրակով ֆիքսել: Սանրել առաջին մա զափունջը և կտրել որոշված երկարությամբ: Այս մազափունջը ծառայում է որպես ստուգիչ մազափունջ: Այնուհետև հորիզոնական բաժուկով պետք է առանձնացնել 1 սմ-ով երկար հաջորդ մազափունջը: Երկու մազափնջե- րը սանրի օգնությամբ բարձրացնել գլխի նկատմամբ ուղղաձիգ և կտրել ստուգիչ մազափնջի մակարդակով: Այդպես կտրվում են նաև բոլոր հա- ջորդ մազափնջերը՝ համապատասխանեցնելով նախորդ մազափնջի եր- կարության հետ: Կտրումը կարելի է կատարել ուղիղ և պոյնտինգ կտրման ձևերի միջոցով: Կտրման գործողությունը ավարտելուց հետո խնամքով սանրել մազերն աճման ուղղությամբ և ստուգել կտրման ուրվագիծը՝ կա- տարելով եզրագծով կտրում: Ճակատային մազափնջի կտրումը ավարտել ֆիլիրովկայով, որի խորությունը կարող է լինել ցանկացած չափի:

Ճակատային մազափնջի երկարու- թյան որոշումն ըստ ստուգիչ մազա- փնջի:

Ճակատային մազափնջի կտրումը ստուգիչ մազափնջին համապա- տասխան:

Ճակատային փարթամ մազափնջեր՝ կտրման ընդհանուր գծով

Այսպիսի ճակատային մազափունջ հաճախ հանդիպում է «կառե» սա- նրվածքում: Դրա երկարությունը կարող է լինել ցանկացած չափի: Այս տե- սակի ճակատային մազափունջը կտրվում է հետևյալ ձևով. ուղղանկյու- նաձև, Π-աձև կամ եռանկյունաձև բաժուկներով առանձնացնել մազերը, ամրացնել դրանք ամրակով: Բաժուկը բացել ճակատային մազափնջի ամբողջ լայնությամբ: Բաժուկը բացվում է մազերի աճմանը զուգահեռ՝ 1 սմ հեռավորության վրա: Սանրել եզրի մազափունջը մազերի աճման ուղղու- թյամբ և կտրել որոշված երկարությամբ: Հետո կատարվում է կտրվածքը «մազափունջը մազափնջի հետևից» մեթոդով: 1 սմ տարածություն անցնե- լուց հետո հաջորդ մազափունջը սանրելով առանձնացնել: Այդ մազա- փունջը դնել ստուգիչ մազափնջի վրա և կտրել նույն երկարությամբ: Բոլոր մազափնջերը կտրել զրոյական ձգումով, այսինքն՝ չբարձրացնելով գլխի նկատմամբ որևէ անկյան տակ:

Ճակատային մազափնջի երկարությունը որոշվում է առաջին մազափնջի եր- կարությամբ:

Ճակատային մազափնջի համար մազերն առանձ- նացվում են եռանկյունաձև բաժուկով:

Ճակատային մազափնջի մազերն առանձնացվում են Π-աձև բաժուկով:

Ճակատային մազափնջի կտրումը՝ մազափունջը մազափնջի վրա:

Մեկ ընդհանուր եզրագծով ճակա- տային մազափունջ, որն ընդգծում է «կառե» սանրվածքի ձևը:

Երկմակարդակ ճակատային մազափունջ

Երկմակարդակ ճակատային մազափունջ կտրելու համար պետք է առանձնացնել բաժուկները ճակատային հատվածների, ինչպես նկարա- գրվել է «Փարթամ ճակատային մազափունջ մեկ կտրման եզրով» բաժնում: Մազերը ֆիքսել ամրակով: Սանրով հորիզոնական բաժուկով առանձնաց- նել առաջին մազափունջը 1 սմ հաստությամբ և կտրել մազերը հորիզո- նական գծով, ճակատի մեջտեղից փոքր-ինչ բարձր: Այնուհետև սանրով առանձնացնել երկրորդ մազափունջը՝ 1 սմ հեռավորության վրա, հորիզո- նական բաժուկով և կտրել առաջին մազափնջի կտրման եզրագծի մակար- դակին համապատասխան: Երրորդ առանձնացրած մազափունջը սանրել դեպի դեմքը և կտրել հորիզոնական գծով, որն անցնում է 1 սմ ներքև՝ հոնքերի մեջտեղով: Նույն կերպ կտրվում են հաջորդ մազափնջերը: Ավարտե-

Երկմակարդակ ճակա- տային մազափնջի կտր- ման առաջին փուլը:

Երկմակարդակ ճակա- տային մազափունջ:

լով կտրվածքը՝ պետք է սանրել և կատարել բավականին խորը ֆիլիրովկա՝ ուղիղ մկրատով: Մկրատը պետք է բռնել մազերի նկատմամբ զուգահեռ:

Ճակատային մազափնջի ֆիլիրովկա և եզրակտրում

Ուղիղ եզրագիծ ունեցող ճակատային մազափնջի եզրագծով կտրում:

Ֆիլիրովկա՝ ուղիղ մկրատով

Ճակատային մազափունջը կտրելիս հարկավոր է այն առանձնացնել ամբողջ մազերի զանգվածից: Կտրել սկսում են մեջտեղի հատվածից: Ճակատային մազափնջի եզրերը կարող են ունենալ այն երկարությունը, ինչն ունի մեջտեղի հատվածը /կարող է լինել դրանից կարճ կամ երկար/: Թեք ճակատային մազափունջ կտրելիս վարսահարդարը կանգնում է հաճախորդի այն կողմում, որ կողմում պետք է լինի կարճ հատվածը: Ամբողջ մազափունջը հավաքում է ձախ ձեռքում, այն բռնում են ցուցամատի և բթի օգնությամբ՝ սանրված կարճ հատվածի ուղղությամբ. Այսինքն՝ մազափունջը հավաքվում է ցանկալի ամենակարճ կետում: Կտրվում է բթի կառուցվածքով՝ լուսնաձև:
Եթե ճակատային մազափնջի մազերը կտրված են ըստ նախատեսված երկարության, ապա պետք է կատարել ֆիլիրովկա: Այն կատարվում է ֆիլիրովային մկրատով կամ ուղիղ մկրատի ծայրով՝ խորանալով 1-1,5 սմ: Մկրատը պետք է բռնել մազերի նկատմամբ զուգահեռ: Ֆիլիրովկայից հետո անհրաժեշտ է կատարել ստուգիչ եզրակտրում: Որքան խնամքով կատարվի այդ գործողությունը, այնքան գեղեցիկ կստացվի ճակատային մազափունջը:

Հարցեր

Որո՞նք են ավարտական աշխատանքները:

_____

_____

Ինչ նշանակություն ունի մազափունջը:

_____

_____

Ի՞նչ է նշանակում «գրադուիրովկան»

_____

_____

Ինչպե՞ս է կատարվում եզրագծով կտրումը:

_____

_____

Նշեք ճակատի մազափնջերի տեսակները:

_____

_____

Ինչպե՞ս է կատարվում ճակատային մազափնջի ֆիլիրովկան և եզրակտրումը:

_____

_____